Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
մարտի 29 -ի N 350 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Դատավորը կամ դատավորին կցված դատական ծառայողը մուտք են գործում դատարանների և ծառայության միջև միմյանց փաստաթղթեր ներկայացնելու նպատակով ստեղծված էլեկտրոնային համակարգ (այսուհետ՝ համակարգ)՝ մուտքանվան և գաղտնաբառի միջոցով: Դատավորի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված կատարողական թերթը և այլ փաստաթղթեր վերբեռնվում են համակարգ:

2. Համակարգի միջոցով ծառայությունն ստանում է համակարգում տեղադրված կատարողական թերթը և այլ փաստաթղթերը՝ ընթացք տալով կատարողական վարույթին:

3. Եթե ստացված կատարողական թերթը չի համապատասխանում օրենքով նախատեսված պահանջներին, կամ եթե բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը, ապա հարկադիր կատարողը որոշում է ընդունում կատարողական թերթը վերադարձնելու մասին և այն վերադարձնում է կատարողական թերթ տված դատարան՝ համակարգում վերբեռնելով կատարողական թերթը վերադարձնելու մասին որոշումը:

4. Կատարողական թերթը վերադարձնելու դեպքում դատարանի կողմից թույլ տրված խախտումները վերացնելուց հետո այն համապատասխան կատարողական վարույթի շրջանակներում կատարման է ներկայացվում՝ սույն կարգին համապատասխան:

5. Կատարողական թերթը վերադարձնելու մասին պահանջատիրոջ դիմումի հիման վրա ծառայությունն օրենքով սահմանված կարգով որոշում է ընդունում վարույթն ավարտելու մասին: Վարույթն ավարտելուց հետո կատարողական թերթը համակարգի միջոցով ուղարկվում է կատարողական թերթ տված դատարան՝ համակարգում վերբեռնելով վարույթն ավարտելու մասին որոշումը:

6. Օրենքով սահմանված ժամկետում անձի՝ կատարողական թերթը կրկին կատարման ներկայացնելու դիմումի հիման վրա կատարողական թերթը դատարանի կողմից կատարման է ուղարկվում՝ այն վերբեռնելով համակարգ՝ սույն կարգին համապատասխան:

7. Ծառայությունը կատարողականան թերթի պարզաբանման անհրաժեշտության դեպքում, էլեկտրոնային եղանակով ստորագրված պարզաբանում ստանալու մասին դիմումը և կից փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացնում է դատարան՝ դրանք վեր-բեռնելով համակարգ:

8. Կատարողական թերթի պարզաբանման մասին որոշումը դատարանը տեղադրում է համակարգում:

9. Հարկադիր կատարողը կատարողական վարույթի ընթացքի վերաբերյալ ընդունված որոշումները և անհրաժեշտ փաստաթղթերն օրենքով սահմանված դեպքերում տեղադրում է համակարգում՝ դրանց նկատմամբ դատավորի հասանելիությունն ապահովելու համար:

10. Համակարգում գեներացվող կամ վերբեռնվող բոլոր փաստաթղթերը պետք է հաստատված լինեն էլեկտրոնային ստորագրությամբ՝ բացառությամբ կցվող, սկանավորված փաստաթղթերի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ